



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԱՍԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻՈՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 14 Նոյեմբեր 2010 թուականը Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ տարեգրութեան մէջ պատմական օր մը դարձաւ, տօնախմբելով Ս. Սարգիս համայնքի կազմութեան 25 ամեայ կեանքը: Այս առիթով պատրաստուեցաւ նաեւ «Յուշամատեան» մը, որ կը պարունակէ եկեղեցւոյ 25 ամեայ յուշեր, դէպքեր ու դէմքեր, 25 տարիներու ամբողջ պատմութիւնը:

Արդարեւ, Կիրակի առաւօտեան ժամերգութենէն ետք, մատուցուեցաւ եպիսկոպոսական հանդիաւոր Ս. Պատարագ: Պատարագիչն էր՝ Թեմիս Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ս. Սեղանի սպասարկեցին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Քիւն. Պապոշեան եւ սարկաւագները, իսկ Ս. Պատարագի երգեցողութիւնը Ս. Սարգիս Եկեղեցւոյ Դպրաց դասին հետ միատեղ կատարեցին Առաջնորդարանիս «Լուսաւորիչ» երգչախումբի անդամ-անդամուհիները, ղեկավարութեամբ՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեանի:

Պատարագին ներկայ էին եկեղեցւոյ բարերարներ, հովանաւորներ, ինչպէս նաեւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Զարոգէն առաջ, »Ուրախ լեր« շարականի երգեցողութեամբ, աջակողմեան աւանդատունէն հանդիսաւորապէս ու թափօրով խորան բերուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Վեհափառ Կաթողիկոսին Հայրապետական օրհնութեան գիրը, ուղղուած Եկեղեցւոյ 25 ամեակին առիթով, զոր ընթերցեց Առաջնորդ Սրբազան Հայրը:

Հայրապետական Կոնդակի ընթերցումէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը դպիր ձեռնադրեց երիտասարդաց խմբակի անդամներէն եւ եկեղեցւոյ խորանի սպասարկողներէն՝ Մելվին Արզումանեանը, Սուրէն Օտապաշեանը, Արա Տեր Յարութիւնեանը եւ Սարգիս Կաբարեանը: Կ'արժէ այստեղ յիշել, թէ 25 ամեակի առթիւ կատարուած այս Դպրաց ձեռնադրութիւնը, անդրանիկ ձեռնադրութիւնն է Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ, որ կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը, խարտաւիլակութեամբ՝ Հոգեւոր Հայր Սուրբին: Խարտաւիլակ Հայր Սուրբին առաջնորդութեամբ ընծայեալները դասէն Ս. խորան բարձրացան եւ Առաջնորդ Սրբազան Հոգ առաջ ծունկի եկան: Ձեռնադրութիւնը կատարուեցաւ աղօթքներու

կատարումով, սաղմոսներու փոխասացութեամբ, շարականներու երգեցողութեամբ եւ դպրութեան չորս աստիճաններու տուչութեամբ:

Ձեռնադրիչ Սրբազան Հայրը նախ նուիրեալներուն մագերը խաչածել կտրեց, ըսելով «Մագերուդ այս կտրուելով երկրաւոր ցանկութիւնները թող հեռանան քեզմէ»: Ապա յաջորդաբար անոնց տուաւ Սաղմոսագիրքը ըսելով. «Գիտակցօրէն պէտք է հաւատաք, ասով ձեր երգածներուն եւ գիտակցօրէն ձեր հաւատացածները պէտք է գործով ցոյց տաք», աւելը՝ ըսելով. «Ձեզի հրաման կու տամ Տիրոջ տունին եւ Աստուծոյ գաւիթին աւելածու ըլլալու», եկեղեցւոյ բանալին՝ ըսելով. «Պատրաստ եղէք եկողներուն առջեւ միշտ բանալու եկեղեցին եւ աղօթեցէք դուռը բացած եւ գոցած պահուն», Առաքելական թուղթերը՝ ըսելով. «Առէք այս գիրքը, տեղեկացէք Աստուծոյ խօսքին եւ պատմեցէք զայն», Մաշտոցը՝ ըսելով. «Առէք եւ հոս գրուած «հրաժարիմք» գոց սորվեցէք», վառած աշտանակը՝ ըսելով. «Առէք մոմի այս աշտանակը, որով ձեզի իշխանութիւն կը տրուի Ս. եկեղեցւոյ մէջ ջահերն ու կանթեղները վառելու», եւ վերջապէս գինիի դատարկ բաժակամանը՝ ըսելով. «Առէք այս բաժակամանը, պատարագի գինին ասոր մէջ լեցնելու համար»:

Դպիրի ձեռնադրութեան աւարտին, Առաջնորդ Սրբազանը նաեւ այդ նուիրեալներէն երկուքին՝ Մելվին Արզումանեանին եւ Սուրէն Օտապաշեանին արտօնութիւն տուաւ ուրար կրելու, ըսելով. »Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի ձեռքէն առէք այս մաքուր եւ Ս. ուրարը եւ մեղքի բոլոր պատրանքները թօթափեցէք, երբ իր ներկայութեան կը կանգնիք»: Ապա պահպանիչով օրհնեց չորս ընծալեալները:

Պատարագիչ Սրբազան Հայրը իր քարոզին սկիզբը նախ փառք եւ գոհութիւն մատուցանեց ամենաբարին Աստուծոյ այդ օրուան իր պարգեւած շնորհքներուն համար, ժողովուրդին ներկայացուց չորս ընծայեալները եւ շնորհաւորեց անոնց կարգի ստացումը, մաղթելով անոնց յարատեւ վերելք եւ արժանաւոր ծառայութիւն Աստուծոյ Տան մէջ:

Ապա Սրբազան Հայրը, օրուան ճաշու Աւետարանէն մեկնելով, խօսեցաւ խոնարհութեան մասին, կոչ ուղղելով բոլորին մանուկի հոգիով խոնարհելու եւ ծառայական հոգիով մեծնալու, որովհետեւ այժմ է Աստուծոյ կողմէ մեզմէ սպասուած ճշմարիտ մեծութիւնը՝ խոնարհութեամբ ու ծառայութեամբ մեծնալ:

«Հայր Մեր»ի երգեցողութեամբ շարունակուեցաւ Ս. եւ անմահ պատարագը եւ պատարագի ընթացքին տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք, որմէ ետք ներկայ հաւատացեալներուն տրուեցաւ Ս. Հաղորդութիւն՝ ի քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Ապա կատարուեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն Ս. Սարգիս համայնքի առաջին հոգեւոր հովիւ՝ Տ. Սարգիս Ա. Քիւն. Անդրեասեանի, եկեղեցւոյ ննջած սպասարկուներուն, հիմնադիրներուն եւ բարերարներուն հոգւոյ ի հանգիստ:

Աւարտին՝ ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» մաղթերգը եւ Ազգային Օրհներգը, որմէ ետք Սրբազան Հօր «Պահպանիչ»ով ժողովուրդը տուն մեկնեցաւ՝ օրուան խորհուրդով լիցքաւորուած:

25 ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Շաբաթ, 13 Նոյեմբերի երեկոյեան, Փասատիսայի Հայ Կեդրոնին մէջ, տեղի ունեցաւ Ս. Սարգիս եկեղեցւոյ ծխական համայնքի հիմնադրութեան 25-ամեակին նուիրուած ճաշկերոյթ տօնակատարութիւնը:

Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը եւ կազմակերպուած էր եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, հոգաբարձութեան եւ Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

Ներկայ էին Կրօնական ժողովի ատենապետ՝ Գերայ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան, Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան, եկեղեցւոյ բարերարներ, հովանաւորներ, քոյր միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ եկեղեցւոյ բարեկամներ:

Պաշտօնական յայտագրի բացման խօսքը արտասանեց եկեղեցւոյ 25-ամեակի կազմակերպիչ յանձնախումբի անդամ եւ օրուան հանդիսավար՝ Լուսինէ Քարճեան: Եկեղեցւոյ Հոգաբարձութեան խօսքը փոխանցեց հոգաբարձութեան ատենապետ՝ Տիար Սարգիս Թաթիկեան:

Գնահատուեցան եկեղեցւոյ նուիրեալներէն՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Նուսէ Սեփեթեանները:

Կատարուեցաւ մոմավառութիւն: Հատուեցաւ 25-ամեակի կարկանդակը եւ յիշատակի նկարներ առնուեցաւ:

Ձեռնարկին պաշտօնական բաժինը աւարտեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան խօսքով եւ պահպանիչով:

Երեկոն խանդավառեց Dark Eyes նուագախումբը:

DIVINE LITURGY AND ORDINATIONS IN CELEBRATION OF THE 25TH ANNIVERSARY OF ST. SARKIS CHURCH

On the weekend of November 13th, 2010, St. Sarkis Church of Pasadena celebrated the 25th anniversary of its establishment with Episcopal Divine Liturgy, ordinations, and a banquet.

On Sunday, November 14th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Sarkis Church. Parish Pastor Rev. Fr. Khoren Babochian assisted at the altar, and the Prelacy "Lousavorich" youth choir, led by Very Rev. Fr. Barthev Gulumian, joined the church choir in the singing of the Liturgy.

Prior to the sermon and with the singing of the "Oorakh Ler" hymn, the Pontifical letter of blessing of H.H. Catholicos Aram I was taken up to the altar and read by the Prelate.

On the occasion of the parish's 25th anniversary, the Prelate ordained as acolytes members of the church youth group and altar servers Melvin Arzoumanian, Suren Odabashian, Ara Der Harutunian, and Sarkis Gaparian.

The four altar servers ascended to the altar and knelt before the Prelate where with prayers and hymns, they were ordained as acolytes.

Following the ordinations, the Prelate also bestowed upon two of the new acolytes Melvin Arzoumanian and Suren Odabashian the privilege of bearing a

stole. The ceremony concluded with the Prelate blessing the newly ordained acolytes.

In his sermon, the Prelate thanked Almighty God for His bountiful blessings and for granting that blessed day, and congratulated the acolytes, praying for the Lord to lead them in their service to the Church. Following to the day's Scripture reading, he spoke of the virtue of humility, urging the faithful to become humble as children so that the Lord may lift them up.

During the requiem service, prayers were offered for the first Parish Pastor Archpriest Fr. Sarkis Antreassian, and all dedicated servants of the church.

The service concluded with the singing of the Cilician anthem and the benediction by the Prelate.

The 25th anniversary banquet was held under the auspices of the Prelate on the evening of Saturday, November 13th, at the Pasadena Armenian Center. The banquet was organized by the Parish Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary.

Among the guests in attendance were Very Rev. Fr. Muron Aznikian, Executive Council Chair Mrs. Rima Boghossian, church benefactors, sponsors, representatives of sister organizations, faithful and friends.

Welcoming remarks were delivered by organizing committee Chair and Master of Ceremonies Lucine Karjian. Board of Trustees Chair Mr. Sarkis Tatuigian delivered remarks on behalf of the Board. Long-time church sponsors Mr. and Mrs. Sarkis and Nouné Sepetjian were honored for their support, and a candle-lighting ceremony also took place.

The official program concluded with the Prelate's message and blessings.